

ել. — ա՛յ-ան-ել. — այ-ն-ել. — է-ն-ել. — է-նել:

«Ար» բաղադրիչով հաղարաւոր բառեր կան մեր լեզուի մէջ: Նա աւելի հին է քան «ան» բաղադրիչը: Դեռ եւս շատ հին ժամանակ նա մաշուած էր արդէն իբր իմաստասիրական արժէք եւ չէր զիտակցում իբր «արար», այսինքն՝ անող: Երբ հնազոյն հայերը դադարեցին «ար»ը զիտակցել իբր «անող»՝ նրանք հին ձեւերը նորոգեցին «ան» ածանցով, որի իմաստը որոշապէս զիտակցում էին իբր «անող»: Այդ շրջանում է «ձմեր» ձեւը դարձել «ձմերան»: «Ձմեր» ձեւը, որ արդէն դադրած էր իբր «ձիմ-ի-ար» զիտակցուել, իր վաղեմի իմաստը տալու համար պէտք է նորոգուէր: Այդ նորոգումը կատարուած է «ան»-ի կցումովը հին ձեւին:

Ժողովուրդն այսօր չի ասում «ձմեռն», այլ «ձմեռ»: Այս ձեւը կարելի է մեկնել ն-ի անկումով, որ պատահած է նաեւ նոյնանման ուրիշ բառերի. հարսն-հարս, մասն-մաստ, տան-ոտ եւայլն: Բայց կարծում եմ, որ այդ ձեւին կարելի է ուրիշ մեկնութիւն տալ. ո՛չ թէ համարել մի դասական ձեւ, որ կորցրած է ն-ն, այլ մի հին եւ ուրոյն ձեւ, իբր մի տարբերակ հնազոյն ձիմիար. — ձմեր ձեւի: Պէտք է ենթադրել, որ հին ժամանակ մենք ունեցած ենք մեր քննած բառի մի նախաւոր ուրիշ ձեւ, իբր «ձիմ-ի-արար», որ իր կազմութեամբ նրման է խաղաղարար, արթարար, ներկարար եւ այլ բառերին: Եւ շուրջ վերջիններ վանկին զարկելով՝ վերջին վանկի ձայնաւորը պէտք է սղէր եւ հին ձեւն ամփոփուելով դառնար «ձիմ-ի-ար», որից երկու ք-ի զօդումով պիտի առաջ գար «ձմեռ» ձեւը: Եւ ժողովուրդը չի ասում «ձմեռուայ», այլ՝ ձմեռուայ»: «Ձմեր» ձեւի ք-ն գալիս է վաղեմի «ար»-ից, իսկ ո-ն հին «արար»ից:

Այս կարգի կազմութիւններ են «պայծառ, կայտառ, պայտառ» բառերը, որ պէտք է վերականգնել իբր «պայծ-արար, կայտ-արար, պայտ-արար»: Այս բառերի առաջին բաղադրիչները մնացած են ժողովուրդի բերանում, բայց օրինակս սղած ձեւով: Դրանցից «պայտ»-ը մոռացուած է շատ տեղ: Իսկ «պայծ»ը դարձած է «պէծ» եւ «կայտ»ը՝ «կէտ»: «Պէծ»

նշանակում է խարոյկի վառ ցայտ. «պէծին տալ» — նշանակում է փայլել: Աշխոյժ երեխայի համար ասում են «կրակ ու պէծ է»: Իսկ «կէտ», որ է «կայտ», նոյն է թէ «կայթ», այսինքն՝ ցատկել, տրտինգ տալ: Յով. Թուրմանեան իր «Պօղոս-Պետրոս» լեզենդի մէջ աշխոյժ ու կայտառ հորթերի մասին գրում է.

Անհանգիստ հորթեր, ամառուան շող օր, կէտ առին փախան, ընկան սար ու ձոր.

«կէտ-արին» — այսինքն՝ կայտ արին. ցատկըրտելով, տրտինգ տալով փախան: Այսպէս ուրեմն, «պայծառ» — նշանակում է կայծ անող, պէծին տուող. իսկ «կայտառ» — կոյտ անող, ցատկըրտող, տրտինգ տուող: Սրանից յետոյ պարզ է և «պայտառ» բառի բուն իմաստը, որ նշանակում է պայտ անող, այսինքն շինող: Այս հիման վրայ ձիմ-ի-ար. — ձմեր եւ ձիմ-ի-արար. — ձմեռ նշանակում են ձիմ-ի անող:

* * *

Արդէն ուրիշ անգամ («Հայրենիք» Ամսագիր, 1928, No. 6) ես պարզած եմ իմ տեսութիւնը մեր սեռական հոլովի կազմութեան մասին: Ես ապացուցած եմ, որ մեր սեռական հոլովը մեր ուղղականն է, միայն տարբեր շեշտաւորութեամբ: Այս տեսութեան համաձայն մեկնենք «ձիւն» ու «ձմեռն» բառերի սեռական ձեւերը, որ են «ձեան» եւ «ձմերան»:

Տեսանք, որ «ձմեռն» բառի հնազոյն ձեւերից մէկն էր «ձմերան»: Այս ձեւը շեշտուած էր իբր — ձ՛ — «ձմե՛րան», որի հետեւանքով առաջին եւ վերջին անշեշտ ձայնաւորները սղած են եւ բառն ստացած է «ձմե՛ռն» ձեւը, որ մեր ուղղականն է: Սեռականի մէջ միեւնոյն հին ձեւը, շեշտն առնում էր վերջին վանկի վրայ, իբր — ձ՛ —, որի պատճառով սղած է առաջին վանկը եւ բառը դարձած է «ձմերան»: Այս ձեւի առաջին սուղ վանկը թոյլ շեշտ ունի, միջին վանկն անշեշտ է եւ վերջինը զօրեղապէս շեշտուած: Այս պատճառով յետագային միջին վանկն եւս սղած ու կորած է, եւ հին սեռականը մեզ երեւում է իբր «ձմ(ե)րան» — ձմրան:

Այս երեւոյթը մշտապէս եղած է մեր լեզուի մէջ. դրա ապացոյցն են «ասղան», «թիթ-